



ԱՆՈՏԱՑԻԱ

Գեղեցիկ Գրիգորյան
ՀՊՏՀ իրավագիտության և քաղաքագիտության
Ամբիոնի դեցենտ, իր.գիտ.թեկ.

***“Իրավագիտություն” առարկայի դասավանդման և ուսումնառության որոշ
հարցերի շուրջ***

Մասնագիտական բուհերում իրավաբանական կրթության անհրաժեշտության, կատարելագործման, որակի հարցերը քննարկվում են տարբեր երկրներում՝ Ֆրանսիա, Բելգիա, Գերմանիա, ԱՄՆ, Հոլանդիա, ՌԴ, նաև ՀՀ-ում, սակայն ոչ մասնագիտական բուհերում իրավական կրթության, մասնավորապես “Իրավագիտություն” առարկայի դասավանդման և ուսումնառության հարցը մատնված է անուշադրության:

Ինչպես վկայում են ուսումնասիրված ՄԿԾ-ները, ՀՀ ոչ մասնագիտական բուհերում “Իրավագիտություն” առարկայի դասավանդումը նպատակ է հետապնդում ուսանողների մոտ ձևավորել իրավագիտակցության և իրավաընկալման պատշաճ մակարդակ: Դասընթացը ուսանողներին հնարավորություն է տալիս ծանոթանալ Հայաստանի Հանրապետության իրավական և քաղաքական համակարգերին, ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին, Հանրապետությունում գործող կարևոր օրենքներին, իրավունքի մի շարք ճյուղերի հիմնահարցերին, հասկանալ պետության և պետական իշխանության կառուցվածքը, իշխանության ճյուղերի հիմնական գործունեության նպատակները, իրավական ակտերի ենթակայությունը և այլն: Դասընթացի նպատակն է նաև հարգալից վերաբերմունք ձևավորել օրենքի՝ որպես հասարակական հարաբերությունների միասնական օրինական կարգավորիչի նկատմամբ, համոզմունք ձևավորել օրենքի խախտման անթույլատրելիության մասին:

Վերլուծելով դասավանդման սեփական փորձը, որոշ ոչ մասնագիտական բուհերի ՄԿԾ-ները, այդ բուհերի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերով սովորող ուսանողների, ինչպես նաև աշխատող շրջանավարտների կարծիքները, հեղինակը բարձրացնում է քննարկման արժանի մի շարք հարցեր:

- “Իրավագիտություն” առարկայի դերի և նշանակության հետ կապված:
- Դասավանդման մեթոդաբանության հետ կապված:



- Ուսումնառության մեթոդաբանության հետ կապված:
- Ժողովրդավարական, իրավական պետությունում և քաղաքացիական հասարակությունում անհատի և մասնագետի իրավագիտակցության մակարդակի հետ կապված:
- Ի՞նչ լուծումներ կառաջարկեն քննարկման մասնակիցները:

ABSTRACT

Geghetsik Grigoryan
Associate professor at the chair of Law at
Armenian State University of Economics, PhD in Law

SOME ISSUES RELATING TO TEACHING AND STUDY OF LEGAL SCIENCE

In different countries, the professional universities highlight such issues as enhancing the quality of teaching of legal science: France, Belgium, Germany, USA, Netherlands, RF, and Armenia. However, at nonprofessional universities the teaching of Law, and particularly, the legislation, is practically discarded. As it is evident from the academic programs of Armenian nonprofessional universities, the teaching of Law intends to shape up the appropriate level of legal conscience and Law perception with the students. The course enables the students to get acquainted with the legal and civil systems of the Republic of Armenia, Human Rights and Fundamental Freedoms envisaged by the RA Constitutions, basic Acts current in the Armenian legislation, a number of fundamental issues relative to certain branches of Law, as well as to form a concept of the state and the government system, functional objectives of the main branches of government, the hierarchy of the legal acts, etc. The course also aims at establishing a respectful approach towards Law as the aggregate legitimate regulator of social relationships, promote and substantiate the conviction that violating laws should not be allowed.

Having analyzed the own teaching experience, academic programs, as well as opinions of the students learning by the curricula developed for the BA and MA Courses, this author emphasizes the following worthwhile questions to be discussed:

1. The role and importance of teaching Law;
2. Methodology of teaching;
3. Methodology of studying;
4. The level of legal consciousness of an individual and a professional in the democratic and legal state and the civil society;
5. What solutions will the participants of the discussion suggest?